
**ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՃԱՌԵՐԻ
ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Վ. Ս.

Կապաղովկիացի մատենագիր Բարսեղ Կեսարացու (329-379) կյանքն ու գործունեությունը շատ կողմերով են առնչվում մեր իրականությանն ու մշակույթին: Նրա աստվածաբանական բնույթի աշխատությունները միջնադարյան Հայաստանի գրչության տարբեր կենտրոններում ընդօրինակվել և կիրառվել են որպես դասագրքեր: Իբրև ապացույց կարելի է նշել, օրինակ, հայ գրչության ու դպրության երախտավորներից մեկի՝ Եսայի Նշեցու՝ Մշո Առաքելոց (Եղիազարու) վանքում 1279 թ. ընդօրինակած՝ Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 5595 «Ճառք Բարսեղի Կեսարացույ» վերտառությամբ գրչագիրը¹, որի պատվիրատուն միջնադարյան Հայաստանի նշանավոր դպրության կենտրոններից մեկի՝ Գլաձորի համալսարանի հիմնադիր Ներսես վարդապետ Մշեցին էր: Այդ գրք-չագրում ամփոփված են Բարսեղ Կեսարացու 31 տարաբնույթ աշխատություններ, որոնց շարքում՝ Վեցօրեայ ճառք, Սահմանք կանոնականք, թղթեր, նամակներ և այլն: Ներսես Մշեցու հիշատակարանի վկայությամբ, «Ի ՉԻԸ (=1279) գրեցաւ կանոնական սահմա-նադրութիւն ուղղութեանցս յուսումն իւրատու կարգաւորութեան վանականաց, յարմարեալ և շարակարգեալ ի հոգեպայծառս և ի տիեզերալոյս վարդապետէ, և ի մեծէ եպիսկոպոսապետէն Կեսարու Կապաղովկացոյ սրբոյն Բարսղի...»²:

Ներսես Մշեցին, պարզաբանելով այս աշխատությունների ընդ-օրինակման անհրաժեշտությունը, նույն հիշատակարանում գրում է. «...գոր-ետու գրել ի իւրատ ուղղութեան վարուց իմոյ անուղղա կենացս..., և ամենեցուն, որ պատահեն և շահեցին ի հոգեշահ բանից աստի, և վարժեալ կրթեցէն զանձինս...զի մի ոք սխալեալ անգիտութամբ վնասեցէ զանձն փոխանակաւ գտելոյ»³:

Նրա հարուստ գրական ժառանգության մեջ է մտնում նաև Մա-տենադարանի թիվ 5595 ձեռագրում ամփոփված «Նայի ը քեզ» բա-րոյափիլիսոփայական ճառը⁴: Այստեղ հեղինակը, մեկնաբանելով Մովսեսի միջոցով հրեաներին տրված Աստծո պատգամը՝ «Նայի ը քեզ: Թող քո սրտում

¹ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմ. Եգանյան Օ., և ուրիշներ, Ե., 1970, էջ 141:

² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմ. Մաթևոսյան Ա., Ե., 1984, էջ 489-490:

³ Նույն տեղում, էջ 490:

⁴ Տե՛ս Մուրադյան Վ. Ս., Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մա-տենագրության մեջ, Ե., 1976, էջ 70:

երբեք անօրեն խորհուրդ չլինի»⁵, մարդկանց առաքինությունները և հոգևոր բարձր արժեքները չկորցնելու համար խրատներ է տալիս հաճախակի կրկնվող «Նայի՛ր քեզ» հրամայականի միջոցով: Օրինակ բերելով Քրիստոսի խոսքերը՝ «Ով ցանկությամբ նայեց կնոջը, արդեն իսկ շնացավ իր սրտում» (Մատթ., Ե 28), «Շատերը նկատում են իրենց աչքի շյուղը, բայց իրենց աչքի գերանը չեն տեսնում» (Ղուկ., Զ 41) և այլն, առաքյալների ու մարգարեների գրվածքները՝ Կեսարացին խրախուսում է իր լսարանին, որ դրանք հիշելու համար չեն ասվել կամ գրվել, այլ կյանքի կոչելու և դրանցով ինքնակատարելագործվելու:

Կեսարացին եկեղեցին համեմատելով աշխարհի մեղքերը՝ հիվանդության, Աստծուն՝ բժշկի, բժշկությունը՝ ապաշխարության հետ, խորհուրդներ է տալիս ամեն մեկին, ըստ նրա կոչման ու հնարավորության. «Ճանապարհորդ ես, ուրեմն նմանվիր աղոթողին... ճարտարապետը թող զգուշությամբ դնի հավատքի հիմքը, որ է Հիսուս Քրիստոս... Շինարարը նայի, թե ինչպես է շինում, ո՛չ փայտ, ո՛չ խոտ, ո՛չ եղեգն...»⁶:

Նկատելի է, որ բոլոր խորհուրդների նպատակը մարդ արարածին հեռու պահելն է այն ամենից, ինչը կարող է չարիք ստեղծել: Նա նաև հույսեր է ներշնչում աղքատության մեջ գտնվող մարդկանց, և փորձում է, կարևորությունը տալով մարդու ներունակություններին, հոգեբանական հետևություններով համոզել, որ խաբուսիկ ու ապակողմնորոշող է մարդու արտաքինը: Սողոմոն Բմաստունի խոսքերով հեղինակը զգուշացնում է նրանց աշխարհի ունայնության մասին. «Շուրջդ նայիր, նրանց, ովքեր քեզանից առաջ փորձվել են բարձրամտությամբ: Ուր են նրանք, որ զգեստավորված էին քաղաքական զորութեամբ: Ուր են անպարտելի հռետորները..., ձիաբույծները, զորավարները, իշխանները, բռնակալները, մի թե՛ ամենքը փռշի չեն դարձել, մի թե՛ մի քանի ոսկոր չի մնացել նրանց կյանքից հիշատակ... Նայի՛ր գերեզմաններին, կարո՞ղ ես արդյոք տարբերել՝ որն է ծառան և որը՝ տերը, որն է աղքատը, և որը հարուստը...» (Էջ 226): Այսպես, շարունակ համոզիչ մեջբերումներ անելով կյանքից, Կեսարացին փորձում է իր ասածները հիմնավորել կյանքի անցողիկության զաղափարներով, մերժելով ու դատարկ համարելով երկրային այն ամենը, ինչ հրապուրում է մարդկանց փառք, պաշտոն, հարստություն: Դրանք բոլորն էլ ժամանակավոր են, մնայունը, ըստ նրա, մարդու հոգին է միայն, որ ծածկված է «մարմնի վարագույրով»:

Բ. Կեսարացին ճառն ավարտում է այն զաղափարով, որ եթե մեկը ուզում է ճանաչել Աստծուն, ապա նախ պետք է ճանաչի ինքն իրեն: Այդպիսով նա

⁵ Աստուածաշունչ, Ս. Էջմիածին, 1994, Երկրորդ Օրենք, Դ 9-10: Այսուհետև Աստուածաշնչից մեջբերվող հղումները կնշվեն բնագրին կից:

⁶ **Բարսեղ Կեսարացի**, Նայի՛ր քեզ (Գանձասար, հ. Է, Ե., 2002, էջ 218: Հին հունարենից թարգմանել է Սիմոն Գրքաշարյանը): Այսուհետև սույն աշխատությունից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

իր ներաշխարհում կարող է գտնել անքննելի ու անըմբռնելի աստվածային իմաստություններ. «Արդ «Նայիր քեզ», որպեսզի տեսնես Աստծուն» (էջ 228):

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ մեր՝ միջնադարյան նշանավոր փիլիսոփա-բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն ոչ միայն ծանոթ է եղել Բարսեղ Կեսարացու այս աշխատանքը, այլև շատ փիլիսոփայական ու աստվածաբանական մտքերի աղբյուր է եղել այն, ինչպես և վկայում է ինքը. «Բայց ի հայրապետ Սրբազանն Բասիլիոս՝ առեալ զբանս զայս յօգուտ իւրոյ հօտին՝ լուսաւոր և ընդարձակ մեկնութեամբ յոլովս տայ իմաստս» (էջ 312): Բյուզանդացի մատենագիրը պատկառելի հեղինակություն է նրա համար, ուստի մովսիսական պատվիրանի մեկնաբանությունը նա գրում է՝ համեմատելով Կեսարացու կարծիքների հետ: Քաղում ու վերաշարադրում որոշ մտքեր, որոնցից և բխեցնում է իր կարծիքներն ու գաղափարները: Ի դեպ, Գրիգոր Նարեկացու ճառի հեղինակային պատկանելության հարցը երկար ժամանակ վիճահարույց խնդիր է եղել, սակայն շատ մասնագետներ հիմնավորապես ապացուցել են, որ այն իրապես Գրիգոր Նարեկացունն է, քանի որ հարազատ է նրա լեզվին ու ոճին: Հ. Միրզոյանը, կատարելով պատմագիտական ու բանասիրական դիտարկումներ, հանգել է այն եզրակացության, որ ճառը գաղափարական-բովանդակային և լեզվամտածողական ընդհանրություններ ունի Նարեկացու երկերի հետ: Այդ տեսակետը պաշտպանում է Հ. Թամրազյանը, որը, մանրագնին ուսումնասիրելով ճառը և համեմատելով հեղինակի մյուս երկերի հետ, եզրակացրել է, որ այն Գրիգոր Նարեկացու հասուն շրջանի գործերից է՝ գրված «Մատեանից» առաջ⁷: Հավելենք նաև այն, որ որոշ ձեռագրեր նույնպես ճառը վերագրում են Գրիգոր Նարեկացուն⁸:

Արդ անդրադառնանք Կեսարացու և Նարեկացու ճառերի համեմատությանը, նրանց նմանություններին ու տարբերություններին, աստվածաբանական և փիլիսոփայական ընդհանրություններին ու միտումներին. «Արդ՝ ասէ և աստուածախօսն և սուրբ Հայրապետն Բասիլիէ. ինչ որ ի սուրբ Եկեղեցի կարգ և աստիճանք կան, ամենեցուն պիտանացու է բանս որ ասէ, հայեաց ի քեզ...»¹⁰:

⁷ Տե՛ս Միրզոյան Հ. Նարեկացիագիտական հետազոտություններ, Ե., 2010, էջ 351-366:

⁸ Տե՛ս Թամրազյան Հ. Ճառ Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ, Ե., 2009, էջ 54:

⁹ Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի երեք ձեռագրերից երկուսը այն վերագրում են Գրիգոր Նարեկացուն, իսկ մեկը անխորազիր է ու անհեղինակ (Մատենադարան, թիվ 1324 (1281 թ., Հաղպատ, թերթ 267ա-276ա), 639 (1409 թ., թերթ 253ա-274ա), 5704 (1852 թ., գրչ. վայր՝ անհայտ կամ՝ Լիմ անապատ, թերթ 3ա-18բ): Ճառը Գրիգոր Նարեկացուն է վերագրված վերջին երկու ձեռագրերում:

¹⁰ Տե՛ս Մ. Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան, Գ. Պոլիս, 1852, էջ 322-323: Ասենք, որ Գրիգոր Նարեկացու ճառի միակ

Ի տարբերություն Կեսարացու, որն իր ճատը սկսում է խաղաղության հորդորով ու պահանջով, Նարեկացին մեկնարկում է Դիոնիսոս Արիոպագացու աստվածաբանական խոհերով, բացարձակ Աստծու հանդեպ «հարաբերական մարդու» պարտավորությունների հորդորներով և նրանց փոխհարաբերությունների բարելավման համար հուսալի միջոցներ ներկայացնելով: Դրանցից ամենանախընտրելի ուղին է յուրաքանչյուր մարդու ներհայեցողության բարոյական գործոնը. «Հայեաց յանձն քո, գուցէ լինիցի բան ծածուկ ի սրտի քո անօրէն»(Ճատ, էջ 313-314): Նարեկացու ատենախոսության, ինչպէս ինքն է նշում, «յայս ահաւոր ատեանս և սոսկալի ժամու յառաջ կոչեցեալ հրաւիրեցա» (Ճատ, էջ 314) և Բարսեղի «Նալիք քեզ» ճառի առանձին հատվածների միջև եղած նմանությունը պարզորոշ երևում է մի քանի դրվագներում: Նույնիսկ կարելի է ասել, որ Կեսարացին նրա համար աղբյուրի դեր է կատարում: Այն հատվածները, որոնք քաղված են Կեսարացուց, Նարեկացին հնարավորինս փորձում է չկրկնել նույնությամբ և մեկնաբանում է իր լեզվով ու ոճով: Օրինակ.

Բարսեղ Կեսարացի

Գրիգոր Նարեկացի

Արդ այս տունը, «որը Կենդանի Աստծոյ եկեղեցին է», ունի որսորդներ, ճանապարհորդներ, շինարարներ, երկրագործներ, հովիվներ, ձգնավորներ, զինվորներ: Սրանց բոլորին պատշաճում է այս հակիրճ խոսքը՝ իւրաքանչիւրին դարձնելով գործերով ճշգրիտ և ջանքերով հոժարակամ... (էջ 222):

Արդ՝ եկեղեցի կոչին ժողովուրդք քրիստոնէից, և է ասել՝ զհաւատն Եկեղեցի Աստուծոյ, որ զամենայն քրիստոնէայս տարեալ ունի և հաւաքեալ ի մի խոստովանութիւն ի մի յոյս կոչման և թուէ այսպէս, եթէ Եկեղեցի որսորդս, ուղեգնացս, ունի ճարտարապետս և շինօղս, երկրագործս և հովիւս, ըմբիշս զօրականս, ընդ արուեստս և գործաւորս՝ համարէ, և հրամայէ ամենեցուն պիտանացու լինել զհայելն յինքն... (Ճատ, էջ 323):

Դժվար չէ նկատել, որ բերված հատվածներում հիմնականում նույն միտքն է արտահայտված, տարբերությունը դրսևորվում է արտահայտման եղանակի, շարադրման բնույթի, շարահյուսական նախընտրած միջոցի և տարբեր լսարաններին ուղղված, հանգամանքների մեջ: Բարսեղ Կեսարացին նշված հատվածում, մյուսներում նույնպես, ավելի սեղմ է ու կուռ, զերծ՝ այսպես կոչված, բա-ցատրական, ծավալուն մեկնաբանություններից: Իսկ

տպագրությունը եղել է Մատյանի նշյալ հրատարակության հետ և ունի ընդհանուր էջակալում: Այսուհետև այս երկից արվող հղումների էջերը կնշվեն բնագրում:

Նարեկացին ավելի պատկերավոր է, նկարագրական, ինչ-որ առումով՝ անձնական և անմիջական.

Որսո՞րդ էս՝ Տիրոջից առաքված, Առաջինն որսայ որ կորստութեամբն
որ ասաց. «Ես առաքում եմ բազմաթիւ որսորդներ, և կորսան նրանց թիւն գոր և դու հայելով ի քեզ և
ամէն մի լեռան վրայ» (Երեմ., 2 16) զպակասն տեսեալ՝ հետ բերցես
ուրեմն փութաջանօրէն հսկի՛ր, զգողացեալ բարիսն, հմուտ որսորդ
որպէսզի որսը ոչ մի տեղ չփախչի լեր որսալոյ աստուածաշունչ գրոց
քեզանից, որպէսզի ճշմարտութեան խոսքով բռնելով չարիքից իբրև զՏեառն ասելն թէ՛ ոչ հացի
որսացուածներից՝ բերես կենդանի միայն կեաց մարդ, այլ ամենայն
Աստուծոյ մոտ(էջ 222): Բանիւ, որ էլանէ ի բերանոյ
Աստուծոյ (Ճառ, էջ 323):

Այստեղ Կեսարացու արած մեջբերումը Երեմիայի գրքից է. «Ես առաքում եմ բազմաթիւ որսորդներ, և կորսան նրանց ամէն լեռան վրայ»: Գրիգոր Նարեկացին մեջբերել է. «Ո՛չ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ էլանէ ի բերանոյ Աստուծոյ» (Մատթ., 7 4) աստվածաշնչյան մեկ ուրիշ պատգամ: Բայց դրանք նույն գաղափարին են ծառայում.

Ճանապարհո՞րդ էս, ուրեմն նայիր «Ուղեգնացն կացցէ ընդ դէմ
աղոթողին. «Ուղղիր իմ ընթացքը» պոռնկական ախտին՝ որ զկնի
(Մաղմ. ԼԹ 3): Նայիր քեզ, որպէսզի որկորին է. զիտելով թէ
չշեղվես ճանապարհից, չխոտորուես ուղեգնաց է՝ և ամենեցուն
աջ կամ ձախ, այլ գնաս արքունի ճանապարհ ի մահն է, և հետ
ճանապարհով... (էջ 222): մահուն ի դատաստան
Աստուծոյ. զի գրեալ է. ճանապարհ
զարքունի գնացես, և մի՛ ի
խոտոր. մի՛ յաջ, և մի՛
յահեակ... (Ճառ, էջ 323):

Կեսարացու մոտ բացակայում է «պոռնկական ախտի» բնորոշումը, իսկ մեր հեղինակը մեջբերում է ավելի պատկերավոր մեկնաբանություն: Հավանաբար, Նարեկացին նմանօրինակ բառերի գործածությամբ նպատակ է ունեցել ավելի դյուրին ու մատչելի դարձնել իր պատգամների հասանելիությունը: Մտորն համադրաբար ներկայացվող հատվածները ցույց են տալիս, բացի նմանություններից, իրենց փիլիսոփայական ձևակերպումներով ու հնչեղությամբ տարբերվող մասերը:

Նայի՛ր քեզ, այսինքն՝ ոչ թէ քոնին «Հայեա՛ց ի քեզ դարձեալ այլ
կամ ինչ որ քո շուրջն է, այլ միայն բան փիլիսոփայական, որ ասեն
քեզ: Քանզի այլ ենք մենք, և այլ է երեք մասունք են մարդկայինք,

մերը, և այլ է, որ մեր շուրջն է: Մենք այլ ենք մեք, և այլ է մերն և ենք հոգին ու միտքը, որով այլ է շուրջ զմեօք, մեք ենք ստեղծվեցինք Ստեղծողի պատկեր- հոգի և միտք, զի այս է մարդն, որ է պատկեր Աստուծոյ՝ անմահ և երկնային» (Ճառ, էջ 321):

Երկու օրինակներն էլ բավական պարզ և մատչելի ներկայացնում են բնությունից և շրջակա աշխարհից տարբերվող մարդուն, նրա էական հատկանիշներն ու ձիրքերը՝ որոնցով նա առանձնանում է մյուսներից: Երկու հեղինակներն էլ հատուկ շեշտադրությամբ են պատգամում բարոյափիլիսոփայական այդ խորհուրդը, որի հիմքում, ըստ էության, ընկած է անտիկ աշխարհից եկող սոկրատեսյան «մարդակենտրոն» իմաստասիրության սկզբունքը: Հայտնի է, որ նրանից հետո հին հունական փիլիսոփայության ուշադրությունը սևեռվեց ոչ միայն բնության ու աշխարհի, այլև մարդու և նրա ներունակությունների վրա: Ահա այս միտումն է դրված երկու հեղինակների պատվիրաններում: Ամեն ջանք ներդնել հանուն ներմարդկայինի բացահայտման և նրան ինքնահայեցողության հրավիրելուն: Ի դեպ, «Ճանաչիր ինքդ քեզ» մոփսիսական հրամայականի վաղեմությունից էլնելով, կարելի է ասել, որ սոկրատեսյան նույն սկզբունքը, այնքան էլ հունական իմաստասիրության առանձանշնորհը չէ, քանի որ ժամանակագրական առումով այն նախորդում է Սոկրատեսին: Ուստի իրավամբ կարող ենք պնդել, որ ինքնաճանաչողության կարևորումը, ներմարդկայինի բացահայտման անհրաժեշտության գիտակցումը պատմականորեն, հին հունական իմաստասիրության շրջանի հետ համեմատած, ավելի վաղ՝ երբայական ծագում ունի: Այս միտքը, անկասկած, ավելի ծանրակշիռ ապացույցների և հիմնավորումների կարիք ունի: Մարդու ներունակությունները բացահայտելուն և կարևորելուն են առնչվում երկու հեղինակների գրած «հոգու աչքերին» առավելություն տվող հատվածները.

...քանզի, արդարեւ, մարդն ինչպէս ...քանզի մարմնոյ ակն չկարէ
ինքն իրեն ամբողջութեամբ կրնոզրկի զամենայն անդամսն տեսանել,
աչքերով: Մարդու աչքը չի կարող ոչ զինքն զթիկունսն, և ոչ
տեսնել սեփական անձը, ոչ զագաթին զգլուխսն բովանդակ և ոչ
է հասնում ոչ թիկունքին, ոչ դեմքին, զպարանոցսն... (Ճառ, էջ 322):
ոչ որովայնի ներսը... (էջ 220):

Մեջբերված հատվածներից բացի, կան նաև այլ դրվագներ, որոնք ակնհայտ են դարձնում, թե ինչպես է Գեսարացու՝ մեկ կամ երկու տողով սահմանափակված բարոյախոսությունը՝ Նարեկացու կողմից վերածվում, այսպես ասած, բարոյափիլիսոփայության, ավելի ծավալուն մեկնության ու լուսարանման: Ահա օրինակ.

Ճարտարապետը թող զգուշու- Հայեաց ի քեզ եթէ իցես

թեամբ դնի Հավատքի հիմքը, ճարտարապետ ի վերայ Քրիստոսի
որ է Հիսուս Քրիստոս: Շինարարը որ հիմն է քրիստոնեությանս՝
թող նայի, թէ ինչպես է շինում. շինեալ մի՛ և խոտ ցողուն զնիւթ
ոչ փայտ, ոչ եղեգն, այլ ոսկի զեհենոյն, որ է աստէն հարստու-
ն արծաթ պատուական թիւն, այլ ոսկի արծաթ՝ պահք,
քարեր... (էջ 222):

նորմութիւն և աղքատութիւն. թէ
յայլ կամիս զարուեստդ ի բան
տանել, նախ զհաւատն դիր յոգիս
աշակերտացն՝ որպէս ճարտարա-
պետն, և ապա զշինուած առա-
քինութեան որպէս շինող երկոսինն
ցուցանելով ի քեզ զօրութիւն ընդ
դէմ հպարտութեան և սնամառու-
թեան, որք են ապականիչք խոնար-
հութեան, և չափաւորութեան
խախտիչք (Ճառ, էջ 324):

Նամանորինակ բազմաթիւ հատվածներ վկայակոչում են երկու ճառերի
առնչակցությունը և բովանդակային տարբերությունը: Ճառերի
համեմատությունը ցույց է տալիս, որ Գրիգոր Նարեկացին ծանոթ է եղել
«հայրապետ սբազան Բասիլիոսի» գործին: Սակայն Նարեկացու ճառը
ինքնատիպ է այն իմաստով, որ նրանում չկան քաղվածքներ: Նա
Կեսարացուն դիմում է իր այս կամ այն մեկնությունը հաստատելու
նպատակով: Այդ պատճառով երբեմն նրանից վերցնում է առանձին
արտահայտություններ, անում իր խոսքին ավելի հարազատ մեջբերումներ
Սուրբ գրքից և ոչ թե Բարսեղի բացատրություններն ու կարծիքները
ներկայացնում իբրև իր հարցերի պատասխան: Ակնառու օրինակ է
Կեսարացու կողմից մի նախադասությամբ սահմանափակված «անպտուղ
թզենու» դրվագը: Սրան Նարեկացին բարոյափիլիսոփայական այնպիսի
ինքնատիպ մեկնություն է տալիս, որ ընթերցողի մեջ կարծես տպավորություն
է ստեղծվում, թե հեղինակը «չի համաձայնվում» Քրիստոսի հետ, անպտուղ
թզենուն նգովելու պարագայում: Բերենք այդ հատվածը.

Երկրագործ, փխրեցրու անպտուղ
թզենու բունը և վրան դիր այն,
ինչ նպաստում է պտղաբերու-
223):

Հայեա՛ց ի քեզ, զի թէ իցես
երկրագործ բանաւոր երկրի՝ քեզ
և այլոց զամենայն մասունսն և թեանը (էջ
հոգւոյդ զգայարանս մարմնոյդ՝
պտղաբերես կալ Աստուծոյ՝
զանպտուղ թզենին մի՛ փութով
հատանել, այլ աղաչեա
զԱստուած ինայել (Ճառ, էջ 324):

Մեկնաբանելով «անպտուղ թզենու» աստվածային խորհուրդը՝ Նարեկացին նրան այլաբանորեն համեմատում է ծույլ աշակերտների, անպատասխանատու մարդկանց հետ: Երկրագործին կամ ուսուցչին նա հորդորում է կատարելագործվել իրենց պարտավորություններում, քանի որ նրանց է տրված բարեխնամելու և կրթելու «սուրբ կոչումը»: Հեղինակը նրանց խրախուսում է իր խորհուրդներին և սկզբունքներին համապատասխան մտնեցում ցուցաբերել կարիքավորներին: Օրինակ, մարդկանց նախապատրաստել Աստծո ահեղ դատաստանին՝ կարեկցությամբ ու սիրով, այլ ոչ թե նզովքով կամ դատապարտումներով. «Թերևս արասցէ պտուղ և կերակրեսցէ զտէր քաղցեալ և այս ընդդէմ կեալն բարկութեան և զայրացման ախտիցն» (Ճառ, էջ 324), - գրում է նա: Նարեկացին իր ճառում Տիրոջից «անպտուղ թզենու» դեպքում ևս քրիստոնեական սիրո դրսևորում է պահանջում՝ ներում, գթասրտություն՝ նզովքի ու կործանման փոխարեն: Ելնելով այդ սկզբունքից՝ Նարեկացին պատասխանատվության կոչ է անում բոլորին, հասարակ մարդկանցից սկսած՝ մինչև բարձրաստիճան հոգևորականները և այլ պաշտոնյաները: Նույնիսկ թագավորին: Ի տարբերություն Բարսեղ Մեծի, որն իր ճառում կարճ ու համառոտ է անդրադառնում յուրաքանչյուր հարցադրմանը՝ «Օրս չի բավականացնի, որ պատմեմ Քրիստոսի պատվիրանների սպասավորների գործերը և այս պատուիրանի զօրութիւնը, թէ որքան պատշաճ է այն ամենքին...», Գրիգոր Նարեկացին փորձում է ամեն առիթով բոլորին հասկացնել «Նայի ր քեզ» պատվիրանի կարևորությունը: Համառոտ բերենք այդ հրահանգները. «Ըմբիջ ես մենամարտ, հայեա ց ի քեզ», «Հայեա ց ի քեզ, թէ ցանկասէր իզամոլ ես», «Թէ կին մարդ է, թող հայի յինքն», «Թէ ծեր ես, հայեա ց ի քեզ», «Եթէ երիտասարդ ես և տղայ, հայեա ց ի քեզ», «Հայեա ց ի քեզ, թէ փարթամ ես», «Եթէ աղքատ ես, հայեա ց ի քեզ», «Եթէ գեղեցկութիւն ունիս, եթէ առողջութիւն. եթէ զօրութիւն ուժից, եթէ շնորհ բանի, կամ արուեստ, հայեա ց ի քեզ», «Եթէ թագաւոր, կամ իշխան, հայեսցէ յինքն» (Ճառ, էջ 323-328) և այլն:

Հեղինակը ցուցումներ է հղում յուրաքանչյուր մարդու, ըստ իր կոչումի և էության: Հասկացնելով, որ ամեն ոք կարող է օգտվել իր խորհուրդներից, եթե արժանապես գնահատի իր իսկ կոչումը և կարողությունները՝ առաջնահերթ նշանակություն տալով ինքնաճանաչողության անհրաժեշտ նախապայմանին: Ուշագրավ է հատկապես ճառում եկեղեցականներին ուղղված խրատների ու բարոյական նորմերի շարքը, թե ինչպես նրանք պետք է իրենց դրսևորեն եկեղեցում, և ինչու է վերջիններիս անաղարտությունը ավելի կարևոր, քան մյուսներինը.

«Եթէ կաթողիկոս ես, հայեաց ի քեզ, զի ամենակալ թարգմանի. և այս Աստուծոյ է անուն, և Աստուծոյ փոխան ես. աստուածաբար խնամ պարտիս տանել ամենեցուն՝ և անխախտ պէտք մնալ ի մարդկային ախտից:

Եթե եպիսկոպոս ես, հայեաց ի քեզ, տեսուչ ասի եպիսկոպոսն և ոստիկան, տես յիստակ աչօք անկաշառ վիճակս առաքելաբար շրջեաց առ ամենեսեան...

Եթե քահանայ ես, հայեաց ի քեզ, զի քավիչ լիցիս, և կոչիս միջ-նորդ Աստուծոյ և մարդկան, տես զի մեղքն քո յԱստուած է ամբարշտութիւն...

Եթե արեղայ ես և կրօնաւոր, հայեաց ի քեզ. արեղայն հայր ասի և կրօնաւոր, որ կրէ զիսչն Քրիստոսի յուն բարձեալ...» (Ճառ, էջ 326):

Նարեկացին յուրահատուկ շեշտադրությամբ ու հոգատարությամբ է խոսում նրանց մասին: Առանձին-առանձին ստուգաբանելով հոգևոր դասի տարբեր կոչումները՝ գրում է. «...վասն զի մարդ մարդոյ մեղանչէ՝ զԱստուած աղաչէ, ասպ թէ Աստուծոյ մեղանչեն՝ զո՞վ աղաչեն» (Ճառ, էջ 326): Աստուծաշնչի պատկերավոր օրինակներով ու հարցադրումներով ապացուցում է, որ եկեղեցականները միջնորդներ են մարդկանց և Աստծո միջև: Նրանց պարտքն է ծառայել ի շահ այդ սրբազան ուխտի, հոգուտ երկրի ու եկեղեցու բարօրության: Ի տարբերություն հասարակ քաղաքացիների, նրանք «արտոնյալներ» են, սակայն այդ առնձնաշնորհը արդարացի կարող է համարվել միայն այն դեպքում, եթե նրանք ճշմարտապես կատարեն իրենց պարտականությունները: Կարելի է ենթադրել, որ այս Ճառը գրվել է հատկապես Քրիստոսի եկեղեցին անաղարտ պահելու համար՝ նպատակաուղղված եկեղեցու սպասավորներին՝ զերծ պահելու անպատասխանատվությունից և խաթարված բարքերից: Փառաբանելով Սուրբ Երրորդությանը՝ Նարեկացին ջանում է մարդու մեջ արմատավորել վեհն ու կատարյալը. «Այսուհետև դարձուցուք զիմանալի շաչ մեր ի մեզ, հայելովն ի վեր ի բարձունս բարձանց ի յերկինս երկնից և ի սուրբն սրբոց, որ անդրէ քան զամենալի գավառն հրեղինաց, յոր միայնակն ամենասուրբ Երրորդութիւնն շրջէ զամենայն արարածս. արտաքս թողեալ առաջին վարագուրան զիմանալիսն յինքենէ, և երկրորդան զմեզ ի նոցանէ. զոր և աստուածաբանեալ փառաւորեցուք աստուածաբան փառատութեամբ օրհնելով զնա յերից երևեալ՝ յերից անձինս...» (Ճառ, էջ 335):

Այսպիսով, Ճառերի համեմատական վերլուծությունից կարող ենք ասել, որ, անշուշտ, նմանություններ կան, սակայն դրանք գերակշռող մասով տարբեր են: Նարեկացին իր ճառում հիշատակում է բյուզանդացի մատենագրի առանձին մեկնաբանությունները, որովհետև կարևորում է դրանց դերն ու նշանակությունը, բայց նա իր տեսանկյունից է դիտարկում «Նայի ր քեզ» հրամայականը: Այդ նպատակին է ծառայեցնում ոչ միայն եկեղեցու հեղինակավոր գործիչներից մեկի՝ Կեսարացու որոշ մոտեցումներ, այլև աստվածաշնչյան այլ պատվիրաններ ու գաղափարներ:

Մեկ կարևոր հանգամանք ևս՝ Գրիգոր Նարեկացու Ճառը հավանաբար գրվել է ժամանակի հատուկ գաղափարական տարաձայնությունների հողի վրա, երբ Հայաստանի ներքաղաքական կյանքը դավանաբանական ու գաղափարական պայքարի մեջ էր թոնդրակյան հերձվածի հետ: Բազմատեսակ խնդիրներից ու բախումներից զերծ չեն նաև ներկայիս

Հայաստանը և հայր: Նարեկացու այս ճառը իր հրամայականով, արժարժած հարցերով ու հասցեատերերով այսօր ևս խիստ արդիական է ու հնչեղ: Նարեկյան դպրոցի հազար տարվա բարոյաբանական հորդորները այսօր ևս կարող են օգնել նրանց, ովքեր կուզենան ինքնաճանաչողությամբ ու ինքնաբնականապես կատարելագործել իրենց ներաշխարհն ու գաղափարները՝ նպաստելով ազգի և երկրի առաջընթացին:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РЕЧЕЙ ГРИГОРА НАРЕКАЦИ И БАРСЕГА КЕСАРАЦИ

КАРАПЕТЯН В. С.

Резюме

Речи Григора Нарекаци и Барсега Кесараци, озаглавленные “Смотри на себя”, – это богословские труды, написанные в форме нравственной проповеди. Основой для них послужили заповеди пророка Моисея /Второй закон, Д. 9-10/, призывавшего еврейский народ к самоочищению и нравственному совершенствованию во имя спасения человечества.

Сравнительный анализ речей Григора Нарекаци и Барсега Кесараци явствует о некоторой схожести, однако в целом они разные. В частности, Григор Нарекаци в своей речи упоминает лишь отдельные комментарии византийского мыслителя, по-своему интерпретируя его призыв “смотри на себя”.

COMPARATIVE ANALYSIS OF THE SPEECHES BY GRIGOR NAREKATSI AND BARSEGH KESARATSI

V. KARAPETYAN

Abstract

The speeches by Grigor Narekatsi and Barsegh Kesaratsi entitled "Look at yourself," are theological works, written in the format of moral sermon. They were based on the commandments of the Prophet Moses / Second Law, D. 9-10 / who called the Jewish people to self-purification and moral perfection in order to save the mankind.

Thus, from the perspective of comparative analysis of the speeches of Grigor Narekatsi and Barsegh Kesaratsi we can say, that they do share

similarities, still, in general they are different. For instance, in his speech Grigor Narekatsi occasionally makes references to the Byzantine thinker.